

ւելի պզտիկ խուցերու , ու քանի մը նեղ խողովներու՝ որոնց մէջ մէյմէկ կամ շատ շատ երկերկու մոմիայ կը դրուէին :

Պիտուներէն ոմանք ըսին թէ Ռարձը Լազիպտոսի մէջ որչափ առաջ երթաս՝ այնչափ մոմիաներն ալ կը քիչնան , և թէ այս մասին մէջ գրտնուածները լաւ պահուած չեն : Բայց Պաղղիպացոյ արշաւանքին ատեն եղած քննութիւնները լաւ կը ցուցնեն որ այս կողմի մոմիաները առաւելագոյն արուեստով զմուսուած են . նոյնպէս Թաթարիքի քարայրներուն մէջ բազմաթիւ մոմիաներ կան , որ աւելի անմշտապահուած են քան զՍաքքարայի գետնադամբաններուն :

Լմենաին չերեար թէ արանց , կանանց ու տղոց համար առանձին առանձին գերեզմաններ ըլլան . և զարմանալին այս է որ տղոց մոմիաներ քիչ կան : Եւս գիակաները , որոնք գրեթէ հաւասար թուով արանց ու կնիկներու մարմիններ են , թէպէտ առջի տեսնուելուն իրարու նման ու նոյն կերպով զմուսած կ'երեւան , բայց ինչպէս վերն

ալ ըսինք՝ իրենց զմուսելուն այլեայլ գոյացութիւններ գործածուած են , և պատատներուն նիւթին տեսակը ու փաթեթելու կերպն ալ ամենուն նոյն պէս չէ :

Մոմիաներուն պատատին ինչնիւթէ ըլլալուն վրայ չեն միաբանիր Լազիպացիք , և ոմանք կտաւէ ու այլք ալ բամբակէ է կ'ըսեն . բայց Պաղղիպ արշաւանաց գիտուններէն մէկը՝ Ռուիէ՝ կը վկայէ թէ շատ մոմիաներ տեսեր է , որոնք կտաւէ պատատներով պլուած էին , և աւելի փափուկ հիւսուածք ունէին քան զբամբակէ պատատները , որոնք ընդհանրապէս աւելի երկրորդական մոմիաներու վրայ կը գտնուին . կենդանեաց , և մասնաւորապէս եգիպտահաւին մոմիաները կտաւէ պատատներու մէջ են կ'ըսէ :

Ուրիշ անգամ մըն ալ կը դնենք այս գիտնոյն՝ մոմիաներուն վրայ ըրած քննութիւնները , որով աւելի որոշ գաղափար մը կրնան առնել ընթերցողք սոնց վրայ :

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Յ Դ Է Պ Ք

Բիանորի Պաղղիպ կայսեր դաւաձանքին դատաստանը : (Տես երես 207)

Շարունակութիւն և վերջ :

Անցեալ անգամուան յիշած ամբաստանութիւնն ու պաշտպանութիւնը՝ ահաւասիկ այս թերթիս մէջ ծայրէ ի ծայր կը գնենք :

Ընդհանուր գործակալը , Պ . Ռուլան , այս ամբաստանութիւնն ըրաւ . “ Դատաւորք , Յովհաննէս Բիանորի անուանով ամբաստանեալ Վայսեր կենաց դէմ գաւաճանութեան փորձ ըրաւ : Խոստովանեցաւ թէ յանցաւոր է : Երկու եղբայր ատրճանակ մը երկու անգամ պարպեց . իր վրան ուրիշ երկու ատրճանակներ ալ գտնուեցան , որոնք լեցուցած էին : Ինքը՝ խելքը գլուխը վրան , ու իր աջատութիւնը ձեռքը , զորն որ զգուելի կրից գերի ըրաւ , ուզեց այս անօրէնութիւնը գործել՝ հռոմայ արշաւանքին վրէժն առնելու համար կ'ըսէ . այսինքն հռոմայեցի անկրօն խռովարարներուն , որոնք գաղղիական զէնքերէն յաղթուեցան ու վռնտուեցան :

” Անօրէնութիւնը խոստովանելէն ետքը ու ես անոր ստուգութեանը վրայ անտարակոյ ըլլա-

լով , կրնայի ես ալ միաբանիլ ազգին հետ , որ լսելով թէ Նախաինամութիւնը այս անօրէնութիւնն արգիլէր էր՝ ուրախութիւն զգաց , կրնայի ուրախանալ Վայսը ողջ տեսնելուս վրայ ու դատաստանարանին հաւատարմութեանը վրայ ապահով ըլլալ : Բայց ժողովուրդն որ այս դատաստանական քննութիւնները չսեր՝ կ'ուզէ իմանալ թէ ինչու ամբաստանելոյն պատիժը ուշացուցինք : Հարկաւոր է ուրեմն որ ճանչցնենք իրեն ամբաստանեալ . անոր համար անոր առջի ժամանակներն ու աւերակը պատմենք :

” Այս մարդը այն պիղծ խուճերէն մէկէն է , զորոնք անկրօնութեան խռովարար ոգին մէկտեղ ժողոված է՝ Թագաւորները սպաննելու ու ազգերու խաղաղութիւնը վերջնելու համար :

” Ըստ պահմանագրութեան՝ կրնար աւելի մեծ իրաւասութեան մը , այսինքն բարձրագոյն ատենին յանձնուիլ այդ ամբաստանեալը : Բայց ասիկայ առիթը չէր , որովհետեւ այսպիսի ցած աստի-

Ճանի մարդասպանի մը համար, որ ստորճանակի հարուածներով կը յայտնէ իրեն վարդապետութիւնները, շուտով գործող գաղափարներ մը պէտք է. ամենեւին հարկ չկայ փառաւոր գաղափարներէն քննութեան մը ձեռք զարնել: Որով այդքէն նստութիւնը ասոր համար ըրինք, որ սորվեցնենք ամբաստանելոյն նմանիլ ուղղութեամբ որ եթէ ժողովրդէան բարկութիւնը զիրենք կտոր կտոր չընէ նէ մէկէն, բայց սակայն կը բռնուին, կը դատուին ու կը պատժուին երազող արդարութեան մը: Ուստի Վայոյն որ ամէն օր առանց հետեւ կիցներուն՝ մեր ճամբաներուն, հասարակաց հրապարակներուն ու ճեմելիքներուն մէջ կը քայլէ՝ իր կենաց կողմանէ հասարակաց բարի հաւատքին վրայ վստահանալով, ուրիշ պաշտպանութիւն չունէր իր անձին համար, բայց եթէ անիկայ՝ զորն որ օրէնքը ամենուն կը շնորհէ: Այսպիսի վստահութեան մը՝ դուք ձեր պատուոյն հաւատարմութեամբ հաւատարեցէք. մենք չենք տարակուսիր ամենեւին ձեր հաստատուն խղճմանքին վրայ:

Սրբայասպանութիւնը միշտ տխուր ու ցաւալի տեսարան մըն է: Բայց հիմա ապացոյց մը փնտռելու կամ քննելու հարկ չկայ. եղածները յայտնի են. ամենքնիդ ալ գիտէք թէ ինչպէս ու ինչ պարագաներով այդ փախստական իտալացին ստորճանակ պարսկաց Վայսեր վրայ:

Գիտէք թէ երբ իր վրան փնտռեցին, իրեք ստորճանակէն ու դաշոյնէն զատ՝ փախելու ամէն հարկաւոր բաներով պատասպարուած էր. գլխարկ մը ունէր, երկրորդ զգեստ մը, ու նոր սրուած ածեւի մը՝ մօրուքը ածիլելու համար:

Այն ատենն որ ժողովրդէան բազմութիւնը սաստիկ զայրացած այն բանին վրայ, որ ամենայն պատրաստութիւն ըրած էր մարդասպանը՝ սպաննելէն ետքը որ և իցէ պզտիկ առթիւ պատժէն փախելու համար, կ'ուզէր օրինաց տալու պատիժը ինքը չունէր մէկէն ի մէկ տալ, ինչ ըրած Վայսերը: Թէ արհամարհելով ու թէ խղճաւով վրան՝ կանչեց. Չըլլայ թէ մեռցնէք: Ետքը գնաց Վայսրուհոյն սիրտը հանդարտեցնելու:

Ասիկայ ինչպիսի մարդ է: Կրակ ձգող մը, մարդասպան մը, բանտէն փախստական մէկ մըն է. ինքը յայսպիսի օր էր 1848էն առաջ. իսկ այդ տարին՝ իրաւացի էր իր գործոցը համար պատկէլ զինքը, որովհետեւ Կարիպալտի գնդերուն մէջ պիտի մտնէր, և այն բազմութիւն արիւնկղակ մարդիկներուն ծառայութեանը պիտի գրուէր, որ Ռոսսի աշխուականը սպաննեցին, Պասը վաճառեցին իր մայրաքաղաքէն, ու այն զղուելի խռովութիւնը թագաւորընէլ տուին Ս. Պետրոսի աթոռին վրայ:

Ինծի հիմա պիտի ըսուի թէ ինչո՞ւ ասանկ շուտով գաղափարներ ելաւ այդ յանցաւորը, առանց ժամանակ թողուլ որ իր դաւակինքներն ու զինքը գրգռողները գտնուին:

Այս նիւթիս վրայօք սրտերնիդ հանդարտ բռնեցէք: Տերութեան խորագէտ ոստիկանութիւնը ամէն արթնութիւն կը բանեցընէ ու արգէն իրեն բոլոր հարկաւոր եղած մարդիկները ճանչցած ու հասկըցած է: Եւ այս բանիս վրայ աւելի չեմ խօսիր. ես այսօրուան օրս օրինաց մարդ եմ. իմ պարտքս միայն այս է, որ ընդհանուր կերպով մը ձեզի իմացընեմ այն յանցանքին հաւանա-

կան պատճառներն ու սկիզբը, որուն պատիժը պիտի տաք:

Լոնտրա մտածուեցաւ այս անօրէնութիւնը, Լոնտրա գնուեցան զէնքերը, Լոնտրա յանձն առաւ ամբաստանեալը այն պարտաւորութիւնն որ իր ձեռքը զինեց. Լոնտրայի, այն ազատութեան երկրին մէջ, ուր որ քաղաքագէտ փախստականները մեծ ազգի մը հիւրընկալութեամբ կը զեղծանին. ուր, պէտք է խոստովանիլ, լոյս ատեն ապականեալ վարդապետութիւններ յայտնի կը քարոզեն. ուր անպատիժ՝ կրնայ մարդ պարստամբութեան ու քաղաքական մարդասպանութեան սկզբունքներն ունենալ: Ահա ասոր կը դարձնեն հիւրընկալութիւնը. և ասիկայ այն առիթն էր արեւմտեցի երկու ամենէն մեծ ժողովուրդները անսահման պատերազմի մը բռնուած իրենց սովորական նախանձորգութիւնը մոռցան:

Այս մարդը մեր երկրին մէջ ալ հիւրընկալութիւն դառն էր. հոս երկու տարիէ ի վեր հանդարտ կ'ապրէր. և յանկարծ անանկ թագաւորի մը դաւաճանութեան փորձ կ'ընէ, որ չճանչնար: Ինչո՞ւ. որովհետեւ զինքը Հռոմէն վաճառեցին:

Ձեզի կը հարցընեմ, պարոններ, թէ որ ասիկայ Փաէնցա մնացած ըլլար իր կնիկան ու որդւոցը բովը և հոն աշխատէր, ինչ կերպով գաղղական զէնքերը իրեն մնաց պիտի բերէին: Իր մնաց կրելուն պատճառն է այն մոլորամիտ ու անիծեալ մարդիկներուն խռովքն ըլլալը, որոնց բնականապէս կը մնասէ անկարգութեան վերցուելը, սրբազան պապին նորէն հաստատուելը, անկրօն խռովարարութեան ճնշուիլը ու օրինաւոր իշխանութեան նորէն ստացած մեծ արանքը:

Կ'ուզէք այդ պատկերին ծայրն ալ տեսնալ: Ուրեմն բերէք մտքերնուդ առջև այդ իտալացին, որ իր յանցանքին վարձքը առնելէն ետքը՝ կու գայ կը հասնի Լոնտրայէն, երկակայեցէք որ ամբողջ աշխարհ մը այս մտածութիւնը մտքին մէջ կը հասունցընէ, և զանիկայ ամենուն գիմաց կը կեղծէ, առանց ամենեւին երեսը քիչ մը խորշոմելու: Կրնայից ուզընէլ ձեզի բոլոր այս ամսուն մէջ որ սրճանոց սրճանոց կ'երթար ու անառակութեամբ կեանքը կ'անցընէր: Նոյն իսկ մարդասպանութեան օրն ալ առաւօտը կնկան մը հետ էր:

Ինքը, պարոններ, անձնական զգացմունքներէ չգրգռուեցաւ այս անօրէնութիւնը գործելու: Չէ, մի խաբուիք. ապստամբողական ոգւոյն գործքն է ասիկայ: Երկարօք որ իր կնիկան ու իր ողոց վրայ ունեցած սէրն ու անոնցմէ զրկուելը՝ իր միտքը մոլորեցուցին:

Կարիպալտի զինուորը, որ առջնիդ կեցեր է, շատոնցունէ մտքէն հաներ էր իր կնիկը, իր որդիքն ու իր հայրենիքը: Իր անցանքին գործողութիւնը զղուելի է, բայց ես առաւել զղուելի այն մտածութիւնը, որ զանիկայ ընէլ տուաւ:

Պարոններ, այս միայն կը մնայ ինծի ըսելու: Այդ յարձակող ընկերութեան շուտ ու սաստիկ պատիժ մը տալու է. հարկաւոր է այս պատիժը, թէ որ կ'ուզենք ապահովընէլ այն Վայսեր կեանքը, զորն որ մենք ամենքնիս ընտրեցինք: Շատ հարկաւոր կը սեպէք այս պատիժը, թէ որ ձեր չորս կողմը հանդիպած դիպուածներուն որ մէկ մը աշուրնիդ դարձնելու ըլլաք: Տեսէք երկու մեծ ազգաց բազմադարեան հակառակութեան

միտքանուծենէն առաջ եկած ամենամեծ հե- տեւութիւնը. ապստամբութեան ոգին կը զայրանայ այս գիպուածիս վրայ, որովհետեւ կը տեսնէ որ ասով նոր գրաւական մըն ալ ունեցանք մեր խա- ղաղուծիւնը պահելու: Այդ ոգին Գաղղիոյ փա- ռաց վրայ ալ կը զայրանայ. և ի վեր քան զամե- նայն անոր կը զայրանայ՝ երբ կը տեսնէ թէ Վայսրն որ, կը կրկնեմ ըսելու, մենք ամենքնիս միաձայն ընտրեցինք, մեր աղքատ կարգի մարդ- կանց վիճակը յաջողութեամբ ու անընդհատ կը լաւցընէ՝ աշխատութեան, չափաւորութեան, ար- գարութեան ու մարդասիրութեան աւելի ընդար- ձակ ասպարէզներ բանալով:

յ, Ապստամբութեան ոգին, ուսկից ծնաւ այդ մարդասպանը, աղգերնուս մեծութեանը վրայ ցաւով սրտի կը նախանձի: Մեր ներքին խաղաղու- թիւնը՝ իրեն յուսահատութիւն կը բերէ: Վայսրը մեզի փառք ու անգործութիւն տուաւ. և անոր համար՝ ամենէն աւելի Վայսրը առարկայ է իրեն ատելութեանը: Ապստամբութեան ոգին ամէն բանէ աւելի անոր համար չարաչար կ'ատէ զինքը՝ որ Վայսրը ընկերութեան իբրեւ նախախնամու- թեան ձեռք մը կ'երևայ:

յ, Պարոններ, բոլոր սրտանց կ'ըսեմ ձեզի թէ այն ամէն մարդիկն որ ընտանիքը, կրօնքը, բարոյա- կանն ու պատիւը յաւիտենական բաներ կը կար- ծեն՝ ինչ ալ որ ըլլայ իրենց ցաւերն ու իրենց ա- պագայ յոյսերը, թող անգրագառնան ու իրենց փորձովը օգտուին:

յ, Այս արքայասպանութիւնը, որ չկրցաւ կա- տարուիլ, կը ցուցընէ մեզի թէ այն չարութեան ոգին, որուն դէմ այս վերջին տարիներս այնչափ հարկ եղաւ մեզի պատերազմիլ, կը սկսի գործել: Հարուածելու է զանիկայ, թէ որ չենք ուզեր ա- նօրէնիւթեան նորէն թագաւորել տեսնել:

յ, Ուրեմն շնորհակալըլանք Աստուծոյ որ այդ մարդասպանին ձեռքը ետ քաշեց: Թէ որ մենք հաստատուն ըլլանք (միայն այսօրուան համար չեմ ըսեր), Գաղղիոյ քրիստոնէական այն հին առածը, որ այնչափ անգամ ազատեց զԳաղղիա, միշտ կ'ա- զատէ զանիկայ: Այո, պարոններ, Աստուած կը պաշտպանէ զԳաղղիա:

յ, Իմ պարտքս ըրի, պարոններ. իմ ընելիքս լմնցաւ. հիմա ձերինը կը սկսի, և ամենևին ոչ սիրտս և ոչ միտքս կը տարակուսի թէ ձեր խղճմը- տանքը ինչպիսի հաւատարմութեամբ ու հաստա- տութեամբ պիտի կատարէ այդ պարտքը և:

Գահերէց. հիմա ամբաստանելոյն ջատագովը խօսի:

Բէնէդիկտո Էմմէ Բոֆֆաբոնը. «Ո՛ր դատաւորք, մարդասիրութեան օրէնքը չուղեր որ ամբաստա- նեալ մը, ինչ տեսակ ամբաստանութեամբ ալ ծան- րացած ըլլայ, առանց ջատագովի մը օգնութեանը դատաստանի առջև ելլէ: Պարտք մըն է ու միշտ պատիւ մը եղած է ատենական մարդկանց համար այս հրամանէս ետ չկենալը, որ շատ անգամ տա- ժանելի է, և թող տուէք որ ըսեմ՝ այս առթիւս անոնց խիստ ցաւալի:

յ, Պաշտօնէս անուանած ու յանկարծակի կան- չուելով իմ մէկ հիւանդ պատուաւոր ընկերիս օգ-

նելու, և ես ալ վշտացեալ, ինչ ըսեմ ձեզի, և ինչ կրնայ ընել մարդկային խօսքը այս դատաստանա- կան քննութիւններուն մէջ: Եանջանքը խոստո- վանուեցաւ, անժխտելի է ու չժխտուեցաւ: Ու- րեմն պէտք է վնասեմ սրտէս այն գոգմնութիւնը, որ ձեր գիմացը ելած յանցանքը կու տայ ինձի, բովանդակ Գաղղիոյ, և ամէն պատուաւոր անձանց՝ ինչ ալ ըլլայ իրենց քաղաքական կարծիքը: Պէտք է ասանկ ընեմ. որովհետեւ այս մեծ վայրկենիս՝ իմ պարտքս է ձեր գթութիւնը արթնցնել:

յ, Այս մէկ քանի համառօտ խօսքերովս կը խըն- գրեմ ձեզմէ, որ ձեր արգարութեան կշռովը կը շ- ուք այս դատաստանական քննութեան ամէն նիւ- թերը և ձեր մտքին ու սրտին մէջ ծնած ամէն մը- տած ութիւնները:

յ, Ամբաստանելոյն առջի գիպուածներուն վը- րայ բան մը ըսելիք չունիմ. բայց դուք՝ առանց ի բաց առնելու կ'ընդունիք այն ամէն վկայութիւն- ները, որ այս ատենին գիմաց ըսուեցան, Բիանո- լեայ ժխտողական պատասխաններէն ետքն ալ: Չէք յիշեր այն վկային խօսքը, որ քիչ մը առաջ ձեզի ըսաւ թէ Բիանոլի աշխատասէր, ազնիւ ու անոյշ արհեստաւոր մըն էր: Չէք յիշեր որ, փառք Աստուծոյ, ամբաստանեալը օտարազգի մըն է, որ վնասուած, աքսորուած է, որ կնիկ ու երկու տղայ ունի: Եւ ի վեր քան զամենայն, ո՛ր դատա-ւ որք, չէք յիշեր այն խօսքերը, որ ինքը այս ատե- նին ըսաւ. այն խօսքերը, որ թերեւս այնչափ լաւ չհասկըցան դատաւորները, և որոնք իր զղջումը կը յայտնէին ըրած յանցանքին վրայ:

յ, Վերջապէս, ո՛ր դատաւորք, հա՛ա ասոնք խղճմտանքս կը բռնադատէ զիս ձեզի ըսելու. և այս խօսքերովս կը լմնցնեմ. այն զղջումն որ ամ- բաստանեալ այս ատենին գիմաց ցուցուց, դա- տաստանական քննութիւնները սկսեւէն առաջ նոյնը աւելի զօրաւոր ու աւելի աղգու կերպով մը ցուցուց իր ջատագովին: Իր զղջումն է իրեն առաջին ու մեծագոյն իրաւունքը թողութիւն գտնելու. ասիկայ իր ջատագովին համար միւի- թարութիւն ու յոյս մըն է, որովհետեւ թէ որ ձեր արգարութիւնը պիտի չփոփոխի, թերեւս ամբաս- տանելոյն խօսքերը ինչուան անոր հասնին, որն որ միայն՝ ձեզմէ ետքը կրնայ օրինաց սուրը ետ գարձնել. և թէ որ խիստ զօրաւոր ու ծայրագոյն հարկաւոր պատճառներ չկան որ գթութիւնը կապկըպէն, թերեւս Վայսեր գիմաց այն խօսքերը հաճոյ անցնին. թերեւս իրեն ազնուութեամբն ու ոգւոյն մեծութեամբը, ամբաստանելոյն կէտքը՝ հասարակաց կատարութեանն ազատելէն ետքը՝ ուզենայ վեհանքն թողութեամբ մը վրէժ առնել, և յաւիտենական ցաւի ու անհուն երախտագի- տութեան մը պատժին դատապարտել անիկայ, զոր դուք յանցաւոր ցուցուցիք և:

Գահերէց. Բիանոլի, ոտքի վրայ ելիր. ասոր վրան աւելցնելու բան մը ունիս. — Չէ:

Ատենին վճիռը անցեալ անգամ գրինք: Մայիսի 14ին կատարուեցաւ այս վճիռը: